600.0286.28.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2017 թվականի №286Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N63Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի №235Ն որոշումը և հաշվի առնելով «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 21-ի №MH/L170722/1.0/RY գրությունը, ինչպես նաև ելնելով բաժանորդներին մատուցվող հանրային ամրակցված հեռախոսային ծառայությունների անընդհատության ապահովման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսային ցանցի ոչ աշխարհագրական կոդերի և համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №63Ա որոշման 1-ին կետում «6076, 6077, 6078, 6079, 6080, 6081» թվերը փոխարինել «6061», «6067», «6068», «6069», «6070» թվերով, իսկ «շարքերը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «6077» ոչ աշխարհագրական կոդի «0000-1200», «3300-3400», «6600-6700», «7000-9200» համարային շարքերը, «6078» ոչ աշխարհագրական կոդի «0000-0800», «7700-8900» համարային շարքերը, «6080» ոչ աշխարհագրական կոդի «0000-0100», «0800-2400», «7770-8990», «9900-9999» համարային շարքերը և «6081» ոչ աշխարհագրական կոդի «0000-1200», «8800-8999» համարային շարքերը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք Երևան
28 հունիսի 2017թ.